

ԱԳՐՈՎԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կարճ տեղեկատվություն տեղական ժողովրդի կենսապայմանների համար ագրո-կենսաբազմազանության կարևորության մասին՝ ուղղված քաղաքականություն մշակողներին

Ագրոկենսաբազմազանություն



Ագրոկենսաբազմազանությունը ներառում է բույսերի, կենդանիների և միկրոօրգանիզմների բազմազանությունը գենետիկ, տեսակային և էկոհամակարգերի մակարդակով, որոնք անհրաժեշտ են պահպանելու համար ագրո-էկոհամակարգի հիմնական գործառույթները, նրա կառուցվածքը և գործընթացները սննդամթերքի արտադրության և սննդի անվտանգության ապահովման համար:

Ագրոկենսաբազմազանության շրջանակները ըստ կենսաբանական տարասայի

Տարաս	Ծավալ
Բույսեր	<ul style="list-style-type: none"> • Մշակաբույսեր • Հավաքած վայրի բույսեր սննդի համար • Ֆերմաների ծառեր • Արոտավայրեր
Բարձրագույն կենդանիներ	<ul style="list-style-type: none"> • Ընտանի կենդանիներ • Վայրի կենդանիներ • Վայրի և ֆերմային ձկներ
Հողվածոտանիներ	<ul style="list-style-type: none"> • Փոշոտողներ • Վնասատուներ • Գիշատիչներ

Հողի բիոտա	<ul style="list-style-type: none"> • Օրգանիզմներ • Միկրոբներ
------------	--

Ագրոկենսաբանությունը աշխարհում էական նշանակություն ունի իր հիմնական 3 գործառույթների համար

- Սննդամթերքի և գյուղատնտեսական այլ ապրանքների կայուն արտադրություն, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսերի նոր տեսակների ստացում;
- Կենսաբանական աջակցություն արտադրությանը, օրինակ, հողի բիոտաի, փոշոտողների միջոցով;
- Ագրո-էկոհամակարգերի կողմից տրամադրվող էկոլոգիական ծառայություններ, ինչպիսիք են լանդշաֆտի, հողի, ջրի ցիկլի և որակի, օդի որակի պահպանումը:

Ագրոկենսաբազմազանության գնահատում

Կան յոթ հիմնական խմբեր, որոնք անմիջականորեն հետաքրքրված են ագրոկենսաբազմազանությամբ՝

- **Միջազգային շահառուներ**, ներառյալ ագրո-քիմիական բազմազանությունը, սննդի և դեղորայքային ընկերությունները զարգացող և զարգացած երկրներում: Վերջիններս հիմնականում առնչվում են ագրոկենսաբազմազանությանը շահույթ ստանալու նպատակով, ինչը նշանակում է, որ նրանք շահագրգռված են ապահովել իրենց գիտահետազոտական և ուսումնական աշխատանքներում կատարած ներդրումների վերադարձը մտավոր սեփականության պահպանման կամ տեխնոլոգիաների ընդլայնման միջոցով: Նրանք նաև մտահոգված են պահպանելու իրենց ազատ և պարբերական հասանելիությունը ագրոկենսաբազմազանությանը in-situ:



- **Սպառողները**, թարմ և վերամշակված սննդամթերքի, դեղորայքի, որոնք պահանջում են էժան, անվտանգ և էկոլոգիապես մաքուր արտադրանք:



- **Գիտնականները**, ներառյալ բուծողները, պաթոլոգներ, շրջակա միջավայրի գիտնականները և ինչպես նաև սննդի տեխնոլոգներն ու դեղորայք հետազոտողները: Հիմնական հետազոտությունների մեջ ներգրավված գիտնականների հիմնական մտահոգությունը կայանում է նրանում թե որքանով է հասանելի ագրոկենսաբազմազանությունը:
- **Միջազգային գենետիկ բանկերի համակարգը**, ներառյալ ազգային, տեղային համակարգերը:
- **Արարչունաբերական գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերները:** Ֆերմերները ագրոկենսաբազմազանության ավանդական պահողներն ու բարելավողներն են: Հաշվի առնելով, որ գլոբալ սննդի անվտանգությունը



հիմնված է արդյունաբերական տիպի գյուղատնտեսական համակարգերի վրա, հարկ է նշել գյուղատնտեսական կենսաբազմազանության կարևոր

ներդրումը գլոբալ սննդամթերքի արտադրության, ինչպես նաև գյուղական բնակավայրերում կայուն ապրելակերպի համար:

- **Ավանդական գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերները**, ներառյալ մի շարք խոշոր և փոքր ֆերմերները, տղամարդ և կին ֆերմերները, տարբեր էկոլոգիական գոտիներում, որոնք կարևորում են ագրոկենսաբազմազանությունը տարբեր ձևերով:

Ագրոկենսաբազմազանության, աղքատության և զարգացման միջև կապը

Ագրոկենսաբազմազանության և կայուն ապրուստի փոխհարաբերությունների հիմնական հատկանիշներից մի քանիսը՝




- Գյուղատնտեսական արտադրությունը, և՛ ավանդական և՛ արդյունաբերական տիպի գյուղատնտեսական համակարգերում, ուղղված է ոչ միայն արտադրողական օգտագործման, այլ նաև էկոհամակարգի գործառույթների և ծառայությունների համար:
- Սպառումը կարող է լինել արտադրողական արժեքի համար (վաճառվում է շուկայում), սակայն սպառողական օգտագործումը նույնպես կարևոր է՝ հատկապես աղքատների համար, ովքեր կախված են ագրոկենսաբազմազանությունից, ստանալու համար արտադրանք, որը չեն կարող ձեռք բերել շուկայում (վառելիք բույսերի չորացած հատվածներից, ավանդական դեղաբույսեր և այլն):
- Պահպանությունը և՛ ներկայիս արդյունավետ օգտագործման համար է և ապագայի գոյության արժեք է: Ավանդական տիպի գյուղատնտեսական համակարգերում, դրանց մեծ մասը կիրականացվի ֆերմայում.

արդյունաբերական տիպի գյուղատնտեսական համակարգերում և միջազգային շահագրգիռ կողմերի համար, ինչպիսիք են միջազգային գյուղատնտեսական հետազոտական համակարգերը և ագրոքիմիական ընկերությունները, դա կատարվում է *ex-situ*՝ գենետիկ բանկերում:

Ագրոկենսաբազմազանությունը կարևոր ներդրում ունի կայուն ապրելակերպի ապահովման մեջ:

- Ագրոկենսաբազմազանությունը ուղղակիորեն նպաստում է ինչպես ավանդական, այնպես էլ արդյունաբերական տիպի գյուղատնտեսական համակարգերում կայուն կենսակերպի ապահովմանը արտադրության միջոցով;
- Ագրոկենսաբազմազանությունը նաև ուղղակիորեն նպաստում է ինչպես ավանդական, այնպես էլ արդյունաբերական տիպի գյուղատնտեսական համակարգերում կայուն կենսակերպի ապահովմանը էկոհամակարգի կարևոր գործառույթների և ծառայությունների մատուցման միջոցով;
- Այն նաև նպաստում է մի շարք այլ շահագրգիռ կողմերի կենսաապահովմանը (հանրային հատվածի և այլ գյուղատնտեսական հետազոտությունների գիտնականների, միջազգային բիոքիմիական ընկերությունների, քաղաքային սպառողների, միջազգային գենետիկ բանկային համակարգերի)։



Ագրոկենսաբազմազանությունը և տարբեր շահառուների ապրելակերպը՝

Շահառուներ	Ագրոկենսաբազմազանության ներդրումները կայուն կենսակերպի ապահովման համար	Ի՞նչ տեսակի ագրոկենսաբազմազանություն	Աջակցող մոտեցումներ
Տրադիցիոն գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերներ	<ul style="list-style-type: none"> Կայուն սննդի արտադրության և կենսակերպի համակարգի հիմք 	<ul style="list-style-type: none"> Բույսեր, կենդանիներ, արթրոպոդ և հողի բիոտա ֆերմայում Գենետիկ բազմազանություն Ecosystem diversity Related human knowledge 	<ul style="list-style-type: none"> Ուժեղացնել գյուղատնտեսության համայնքային կառավարումը Increase agrobiodiversity options available to farmers
Գյուղական տարածքներում խոցելի խմբերը	<ul style="list-style-type: none"> Նշանակալի ներդրում սննդի և այլ ապրուստի միջոցների կարիքների ապահովման մեջ 	<ul style="list-style-type: none"> Հատուկ բաղադրիչներ (վայրի սննդամթերք, բերքահավաք) 	<ul style="list-style-type: none"> Ագրոկենսաբազմազանության հասանելիության իրավունքների պահպանում
Արդյունաբերական գյուղատնտեսությամբ զբաղող ֆերմերներ	<ul style="list-style-type: none"> Հումք ֆորմալ հատվածի բուծողներին, բերքատվության բարձրացման համար Էկոհամակարգային գործառույթներ և ծառայություններ 	<ul style="list-style-type: none"> Բույսերի գենետիկական ռեսուրսներ ֆերմայից դուրս Ոչ բուսական կենսաբազմազանություն ֆերմայում և ֆերմայից դուրս 	<ul style="list-style-type: none"> ex-situ պահպանման ազգային անվտանգություն, բույսերի գենետիկական ռեսուրսների հասանելիություն
Միջազգային շահառուներ, սպառողներ	<ul style="list-style-type: none"> Բոլորի համար կայուն սննդի արտադրություն Գիտնականների համար ագրոկենսաբազմազանության հասանելիություն 	<ul style="list-style-type: none"> Գլոբալ գենային բազմազանություն Գլոբալ էկոհամակարգերի բազմազանություն Գլոբալ իմացություն 	<ul style="list-style-type: none"> Ագրոկենսաբազմազանության ex-situ և in-situ պահպանում գլոբալ մակարդակով Տեղնուղղիաներին հասանելիության ապահովում

Ագրոկենսաբազմազանություն, փոխակերպում և աղքատություն

Գոյություն ունեն 2 վիճելի հարցեր ագրոկենսաբազմազանության վերաբերյալ՝ ո՞րն է կապը ագրոկենսաբազմազանության և աղքատության; և ինչու՞ է բնակչությունը օգտագործում ցածր ագրոկենսաբազմազանության ռազմավարությունները, չնայած կենսաբազմազան գյուղատնտեսության բոլոր ենթադրյալ օգուտներին:

Գոյություն ունեն մի շարք ապացույցներ, որ ագրոկենսաբազմազանությունը, հատկապես բուսական բազմազանությունը, կենտրոնացված է աղքատ տարածքներում: Զարգացող երկրներում ավելի մեծ քանակի ագրոկենսաբազմազանություն գոյություն ունի, քան զարգացած երկրներում, իսկամենամեծ բուսական բազմազանությունը գտնվում է այդ երկրների ամենաաղքատ շրջաններում: Սա ուղեկցվում է նրանով, որ ագրոկենսաբազմազանությունը և զարգացումը ուղիղ համեմատական են, և որ տնտեսական զարգացումը պետք է ներառի ագրոկենսաբազմազան տարածքների փոխակերպումը ավելի արդյունավետ տարածքների: Գոյություն ունեն 3 բարդիչներ՝



- Դժվար է համեմատել ագրոկենսաբազմազանությունը բոլոր վայրերում, քանի որ բազմազանության մակարդակը տարբեր է տարբեր ագրոէկոլոգիական տարածքներում:
- Ագրոկենսաբազմազանությունը հատուկ է հարուստ և արդյունաբերական գյուղատնտեսությամբ զբաղվող երկրներին գյուղատնտեսության բարելավման համար, այնուամենայնիվ վերջինս շատ հաճախ ցիկ կատարվում ֆերմայում:
- Միկրո մակարդակում ագրոկենսաբանության և աղքատության կապը պարզ չէ:

Քիչ զարգացած տարածքների կենսաբազմազան գյուղատնտեսական համակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ֆերմերները հաճախ ընտրում են պահպանել տեղական մշակաբույսերի գերմալազը, քանի որ առկա տնտեսական պայմաններում այն ավելի լավ է տարածվում և ավելի լավ է դիմանում ռիսկերին, քան ներկայումս առկա բուծվող այլընտրանքային տեսակները: Այնուամենայնիվ տարբեր համայնքների բնակիչների կադվածությունը ազրոկենսաբազմազանությունից տարբեր է: Մի կողմից, ցանկացած համայնքում, մշակաբույսերի բազմազանությունը հաճախ ավելի հարուստ ֆերմերների կողմից է օգտագործվում: Մյուս կողմից, կան նաև աղքատ և խոցելի խմբեր, որոնք մեծապես կախված են ազրոկենսաբազմազանության այլ բնագավառներից (վայրի բույսեր, հողի բիոտա և միջատներ) և ավելի ուշադիր են վերջիններիս պահպանման հարցում: Այս կենսաբազմազանության կորուստը կարող է հանգեցնել ծանր կենսապահովման կորուստների, խորտակելով արտադրական ընտրությունները և սննդամթերքի անվտանգությունը, բարձրացնելով վերջիններիս հանդեպ ռիսկի ազդեցությունը: Ի վերջո, ազրոկենսաբազմազանության առավել հարմար օգտագործումը կախված է հստակ տեղական համատեքստից: Հետևաբար, տեղական ֆերմերների և համայնքների հետ աշխատելու անհրաժեշտությունը մասնակցային ձևով մեծ է, բացահայտելու գործողությունների հնարավորությունները և դրանց իրականացման առավել համապատասխան միջոցները:


Ազրոկենսաբազմազանության միջոցով աղքատության նվազեցման համար հնարավորություններ

Ազրոկենսաբազմազանության նոր մոտեցումը հարկավոր է, ինչը կօգնի վերջինիս դինամիկ կառավարմանը ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակով:


Այն ներառում է՝

- Խաչաձև ճյուղային գործունեություն;
- Քաղաքական և տեղային մոտեցումների համադրում;
- Ապակենտրոնացված իմացություն-տեխնոլոգիաների զարգացման ինտենսիվ մոտեցում, որտեղ ֆերմերները հիմնական պրոցեսի մասնակիցներ են;
- Strengthening local institutions;
- Քաղաքական ներդրումների բարձր մակարդակ, ազրոկենսաբազմազանության կառավարման և փոխանակման համար (մարդկանց, երկրների և համայնքների միջև ազրոկենսաբազմազանության մեծ տարբերության պատճառով):


Աղքատության նվազեցում ագրոկենսաբազմազանության օգտագործման միջոցով: քաղաքական տարբերակներ և մուտքի կետեր




1. Հիմնական նպատակն է՝ օգտագործել ագրոկենսաբազմազանությունը կայուն գյուղական կենսապահովման համար:



2. Մարդկային և սոցիալական կապիտալը թույլ են տալիս օգտագործել ագրոկենսաբազմազանությունը և դրանով իսկ նպաստում են համայնքների կայուն կենսակերպին: Սա քաղաքական և տնտեսական միջավայրի համատեքստն է: Կարևոր է նաև ֆիզիկական և ֆինանսական կապիտալը:





3. Ազրոկենսաբազմազանության օգտագործման կարողությունների ամրապնդման կետերը կարող են ներառել՝ նոր կենսաբազմազանության հասանելիություն՝ կրթություն, վերապատրաստում և նոր տեխնոլոգիաներ, ինչպես նաև գյուղի և գյուղատնտեսական կազմակերպությունների ամրապնդում, տնտեսական և քաղաքական միջավայրի ճշգրտում:

Տնտեսական տեսանկյունից...

Տնտեսական տեսանկյունից, համաշխարհային մակարդակով բուսական կենսաբազմազանության աննախադեպ կորուստը, արդյունք է այն բանի, որ այս բազմազանության իրական արժեքը արտացոլված չէ վերջինիս շուկայական գներում: Մարդիկ թերագնահատում են գենետիկ ռեսուրսները, քանի որ բույսերի բազմազանության պահպանման և օգտագործման հանրային և մասնավոր օգտակարությունը, չունի շուկայական արժեք:



Ոչ-շուկայական արժեքը ներառում է էկոհամակարգի ծառայությունները, ուղղակիորեն ուղղված ընտանիքներին, օրինակ, օգնություն կին և տղամարդ փոքր ֆերմերներին:

Ինչ է պետք ապահովել՝

- Ռիսկերի կառավարումը ֆերմայում – հատկապես մարզինալ և հետերոգեն հողակտորներում, որտեղ աշխատում են աղքատ ֆերմերները;
- Սննդի անվտանգության և սննդարար մթերքի հասանելիության ապահովումը;
- Պահպանել կայունությունը տարածաշրջանային մակարդակով;
- Վնասատուներին և հիվանդություններին դիմակայելու հնարավորության ապահովումը;
- Բույսերի հարմարվողականության ապահովումը կլիմայի փոփոխություններին;
- Ավանդական իմացությունների և մշակութային փորձի պահպանում, օրինակ սննդի մշակույթը:

Շուկայի հնարավորությունների իմացությունը, որը աջակցում է ագրոկենսաբազմազանության պահպանմանը, հիմնային է հարց է, սննդի անվտանգության և առողջ էկոհամակարգի պահպանման համար:

Ազգային մակարդակով

Ազգային մակարդակով քաղաքական և ինստիտուցիոնալ աջակցությունը անհրաժեշտ է տեղական մակարդակի նախաձեռնությունների իրականացման համար: Մա կարող է ներառել ոլորտային ծրագրեր, ինստիտուցիոնալ աջակցություն և քաղաքականության աջակցման միավորներ:

Ազգային պլանավորման համակարգ



Ազրոկենսաբազմազանության խնդիրները պետք է հիմնականում ներգրավված լինեն բոլոր կազմակերպությունների քաղաքականության և գործունեության մեջ – այլ ոչ թե, օրինակ, ունենալով մեկ ազգային բույսերի գենետիկական ռեսուրսների ծրագիր, որը տեղակայված է ազգային բույսերի գենետիկական ռեսուրսների կենտրոնում և այլ շահագրգիռ կողմերի հետ քիչ կապի մեջ է: Ազրոկենսաբազմազանության ուղղակի կամ անուղղակի մասնաբաժին ունեցող բոլոր դերակատարների, համապատասխան ստորաբաժանումների և կազմակերպությունների կողմից համագործակցության հասնելու անհրաժեշտությունը այժմ համարվում է ազրոկենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման Գլոբալ պլանի հիմնական բաղադրիչը: Վերջինս ներառում է բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը, ներառյալ ֆերմերների / համայնքի ներկայացուցիչների: Մա կարող է պահանջել ազգային քաղաքականության մշակողների վերապատրաստում գյուղատնտեսական կենսաբազմազանության հետ կապված տեխնիկական և տնտեսական հարցերում, խնդիրների լուծման կարողությունների բարելավման համար:

Ազգային իրավական և քաղաքական համակարգում

Տարբեր նպատակներով ազգային մակարդակով մշակված և իրականացվող քաղաքականությունը և օրենսդրությունը կարող են անմիջականորեն ազդել կայուն ապրուստի համար ազրոկենսաբազմազանության օգտագործման վրա: Դրա

ամենավառ օրինակն է արդյունաբերական տիպի գյուղատնտեսական համակարգերի վերափոխման խթանումը և ագրոկենսաբազմազանության օգտագործման կրճատումը, որը տրամադրվում է գյուղատնտեսական գնումների սուբսիդավորման սխեմաներով, կարևոր է նաև գյուղատնտեսական մարքեթինգային քաղաքականության ապահովումը գյուղատնտեսական կենսաբազմազանության ապահովման համար: Ազգային իրավական և քաղաքական շրջանակների ազդեցությունը գյուղատնտեսական կենսաբազմազանության և աղքատության կրճատման վրա պետք է մշտապես վերանայվի: Նման վերանայումները պետք է լինեն մասնակցային գործընթացներ, որոնք ներառում են բոլոր շահագրգիռ կողմերը:

Միջազգային մակարդակով

Աղքատության հաղթահարման համար գյուղատնտեսական կենսաբազմազանության օգտագործմանն աջակցելու համաշխարհային մակարդակի հնարավորությունները բաժանվում են երկու կատեգորիաների՝ առաջին հերթին, նրանք, որոնք նպաստում են վերը նշված գործողություններին ազգային և տեղական մակարդակներում, և երկրորդ, որոշ գործողություններ, որոնք կարող են արդյունավետորեն իրականացվել միայն միջազգային մակարդակում (օրինակ, երկարաժամկետ պահպանում, որոշ մշակաբույսերի գենետիկ ընդլայնում, պահպանության միջազգային շրջանակ, կայուն օգտագործում և շահույթի փոխանակում):



Աջակցություն, զարգացում և շրջակա միջավայրի ծրագրեր

Նախորդ բաժիններում նշված գործողություններին կարող են նպաստել երկկողմանի շահավետ ծրագրերը մի շարք կազմակերպությունների միջոցով (օրինակ, ՄԱԿ-ի մասնագիտացված կազմակերպությունները):

Առանձնապես գլոբալ մտահոգությունների լուծման նպատակով, այդ մեխանիզմները

համալրվում են, օրինակ, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամով: Գյուղատնտեսական կենսաբազմազանությունը պետք է ներառվի զարգացման կրթական ծրագրերում արեւոր է նաև սպառողների շրջանում իրազեկման բարձրացումը, սննդամթերքի սպառման նախադրյալների էկոլոգիական և սոցիալական «ոտնահետքերը» հրապարակելու համար:

Միջազգային համաձայնագրեր և որոշումների կայացման հարթակներ

Միջազգային իրավունքի եւ կանոնակարգի շրջանակները պետք է կատարեն հետևյալ գործողությունները՝

- Նպաստել գենետիկական ռեսուրսների և դրանց առնչվող տեղեկատվության և տեխնոլոգիաների մատչելիության ապահովմանը կանխելու համար մենաշնորհային պայմանները;
- Ապահովել կենսական անվտանգություն, պահպանելով շրջակա միջավայրը, և խուսափելով խոցելի գյուղատնտեսական համակարգերի միջոցով ապրուստի միջոցներին վնասելուց;
- Ապահովել ֆերմերների իրավունքների տարբեր ասպեկտները ըստ ֆերմերների և համայնքների պահանջների, պահպանելու, զարգացնելու և կիսելու համար այն օգուտները, որոնք տալիս է ագրոկենսաբազմազանության օգտագործումը:

Վերջաբան

Համախմբելով, պետք է նշել, որ տեղական, ազգային և գլոբալ մակարդակներում գործողությունների հնարավորություններին աջակցումը, գյուղատնտեսական կենսաբազմազանության ավելի լայն օգտագործումը աղքատության կրճատման համար, պարենային անվտանգության բարելավումը, ենթադրում է, որ անհրաժեշտ է գյուղատնտեսական հետազոտությունների և զարգացման նոր մոտեցում, բավարարելու համար գյուղական աղքատների մեծամասնության կարիքները, ովքեր ապրում են ավելի քիչ բնական ռեսուրսներ ունեցող տարածքներում: Այս նոր մոտեցումը պահանջում է ավելի մեծ ներգրավվածություն՝ ֆերմերների, տեղական համայնքների, քաղաքականության մշակողների, մասնավորապես, տեղական և ազգային մակարդակով քաղաքացիական:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիոլոգիայի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):

